Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
հուլիսի 8 -ի N 429 - Ա
որոշման

# Ծ Ր Ա Գ Ի Ր
# «ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ»

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության աշխատակիցների համար կազմակերպել անգլերեն լեզվի դասընթացներ և մարդկային ռեսուրսների կառավարման վերապատրաստման դասընթացներ՝ համաձայնեցված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կադրերի և ռազմական կրթության վարչության պահանջներին: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ), 55 Արևելք, 59-րդ փող. Նյու Յորք, NY 10022-1112 |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, կրթական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 10 907 950 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից ընտրված մասնակիցներ: Ցանկը հաստատվում է նախարարի կողմից: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2019 թ. հուլիսի 8-ից մինչև դեկտեմբերի 31-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության առնվազն 26 աշխատակիցներ հնարավորություն կունենան մասնակցելու անգլերեն լեզվի կատարելագործման դասընթացներին տարբեր, սակայն ոչ պակաս, քան 3 մակարդակներում, ըստ գիտելիքների ստուգման արդյունքների՝ հաշվի առնելով մասնագիտական առանձնահատկությունները: Յուրաքանչյուր դասընթացի տևողությունը կազմում է 9 շաբաթ, շաբաթական 3 օր՝ յուրաքանչյուր դասընթացը 3 ժամ տևողությամբ: Դասընթացների ընդհանուր բյուջեն կազմում է 9,227,435 (ինը միլիոն երկու հարյուր քսանյոթ հազար չորս հարյուր երեսունհինգ) դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |

| | | |
|---|---|---|
| | | Նաև 20 աշխատակիցներ կմասնակցեն մարդկային ռեսուրսների կառավարման վերապատրաստման դասընթացներին: Մարդկային ռեսուրսների կառավարման վերապատրաստման դասընթացները ներառելու են ինչպես ընդհանրական, այնպես էլ ռազմական կառավարման համակարգին հատուկ գիտելիքների դասավանդում՝ համաձայնեցված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության պահանջներին և ներառելով հրավիրյալ դասախոսների: Դասընթացի տևողությունը կազմում է 5 շաբաթ, շաբաթական 2 օր՝ յուրաքանչյուր դասընթացը 2.5 ժամ տևողությամբ: Դասընթացների ընդհանուր բյուջեն կազմում է 1,680,514 (մեկ միլիոն վեց հարյուր ութսուն հազար հինգ հարյուր տասնչորս) դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Հայաստանի ամերիկյան համալսարանին պատվիրել ներքոգրյալ ծառայությունները, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 10 907 950 դրամ՝ առանց ԱԱՀ-ի.<br>- Անգլերեն լեզվի դասընթացների կազմակերպում և անցկացում՝ 9,227,435 (ինը միլիոն երկու հարյուր քսանյոթ հազար չորս հարյուր երեսունհինգ) դրամ՝ առանց ԱԱՀ-ի,<br>- Մարդկային ռեսուրսների կառավարման վերապատրաստման դասընթացների կազմակերպում և անցկացում՝ 1,680,514 (մեկ միլիոն վեց հարյուր ութսուն հազար հինգ հարյուր տասնչորս) դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ մարմինների հետ | Չի նախատեսվում: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Յուրաքանչյուր դասընթացի ավարտին մասնակիցները հանձնելու են գիտելիքի ստուգման թեստեր՝ գնահատելու համար մասնակցի առաջադիմությունը, ինչպես նաև պաշտպանության նախարարության հետ համատեղ մշակված հարցախույզների շնորհիվ գնահատվելու են ծրագրի արդյունքները և ազդեցությունը:<br>Ֆինանսական և նկարագրային հաշվետվություններ են ներկայացվում Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչությանը:<br>ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ